

6. — Կարգ ձաշակման: — Քան ամէն կերակուր կանխելու էր գառնը: Խոսարովիկ կը պատմէ ը դարուն՝ թէ մեծ պահքը կը լուծուէր նոյն իսկ ասոր ճաշակմամբ . «Պահի, կ'ըսէ, մինչեւ զենանի գառն զատկին» (Խար. քառ.): Ս. Խորհրդոյն հաղորդելէ վերջ, կը յարէ Տարօնացին, անպատեհ է անսուրբ կերակրոց մերձենալ. այլ նախ պէտք է «զմիս աղահար օրհնել եւ ուտել», եւ յետոյ միւսները (Թէոփ. 278): Եւ այդպէս ալ պիտի լինէր, քանի որ գառն եկեղեցւոյ դուռն իսկ կը բաշխուէր եւ կ'ուտուէր, ինչպէս տեսանք (աստ, 373): Հոս ալ մեր նախնիք նման էին Լատինաց, որ կ'ուտէին գառն «յառաջ քան զայլ հասարակաց կերակուրս» (Բնդհ. 158): Սակայն Շնորհալին բուժելու համար օտարաց գայթակղութիւնը, աւելորդ համարեցաւ եւ յորդորեց ջնջել այս խտրութիւնը. «Թէպէտ յառաջ, կ'ըսէ, քան զայլ կերակուրս եւ թէպէտ յետոյ, անվնաս են երկոքին» (անդ, 160):

Աւելի տարօրինակ գաղափար մ'ալ կը գտնենք աւանդուած Ալաւկայ որդիէն: Ով, կ'ըսէ, անպատրաստ է մօտենալու ս. Սեղանոյն, «նախ ի խորհրդական եւ յօրինական յանրան գառին մտոյն կերիցէ, եւ ապա ի մարմնականն դառնալ կերակուր»